ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ ԳՈՌ ԱՇՈՏԻ

ԲԵԳԼԱՐ ԱՄԻՐՋԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ

ԺԷ.00.02 – «Երաժշտական արվեստ» մասնագիտությամբ
արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

САЛНАЗАРЯН ГОР АШОТОВИЧ

ИСПОЛНИТЕЛЬСКОЕ ИСКУССТВО БЕГЛАРА АМИРДЖАНА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата искусствоведения по специальности
17.00.02 – “Музыкальное искусство”

ЕРЕВАН – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԱՍԱՏՐՅԱՆ Աննա Գրիգորի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ արվեստագիտության դոկտոր
ՌՈՒԽԿՅԱՆ Մարգարիտա Աշոտի
արվեստագիտության թեկնածու, դոցենտ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Աննա Պետրոսի

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա

Պաշտպանությունը կայանալու է 2022թ. դեկտեմբերի 8-ին, ժամը՝ 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022թ. հոկտեմբերի 28-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Ասատրյան Ա.Գ.

Тема диссертации утверждена в Институте искусств НАН РА.

Научный руководитель – доктор искусствоведения, профессор
АСАТРЯН Анна Григорьевна

Официальные оппоненты – доктор искусствоведения
РУХКЯН Маргарита Ашотовна
кандидат искусствоведения, доцент
АРУТЮНЯН Анна Петросовна

Ведущая организация –Ереванская государственная консерватория им.Комитаса

Защита диссертации состоится 8-го декабря 2022г. в 14.00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в Институте искусств НАН РА (адрес: Ереван, 0019, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.

Автореферат разослан 28-го октября 2022г.

Ученый секретарь специализированного совета,
доктор искусствоведения, профессор

Асатрян А.Г.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ծանրակշիռ է հայ երգիչ, Միլանի կոնսերվատորիայի շրջանավարտ, Մոսկվայի մեծ (1895-1903), Թիֆլիսի արքունական թատրոնների (1903-1904), Պետերբուրգի ժողովրդական տան օպերայի (1904-1916) մենակատար, bel canto-ի վարպետ, իտալական վոկալ դպրոցի տաղանդավոր ներկայացուցիչ լիրիկոդրամատիկական բարիտոն **Բեգլար Աստվածատուրի Ամիրջանի**[1] (Ամիրջանյան, 1868-1935) դերը հայ և ռուսական կատարողական արվեստում: Հայ առաջին բարիտոն Ամիրջանը համարվել է XIX դարավերջին և XX դարասկզբին «ռուսական երաժշտական թատրոնների ամենաշնորհալի բարիտոններից մեկը, որ անմոռանալի է մնացել արևմտաեվրոպական և ռուսական կլասիկ օպերաների մի շարք դերերգերի[2] հմուտ ու նրբարվեստ կատարումով»[3]: Իր պրոֆեսիոնալ բարձր մակարդակով երգիչը փայլել է թե՛ իտալական քաղաքների (Վենետիկ, Ջենովա, Թուրին, Միլան ևն), թե՛ Մոսկվայի, Պետերբուրգի և ռուսական այլ քաղաքների, այդ թվում՝ Իրկուտսկի, Կիևի, Նովոչերկասսկի, Սևաստոպոլի, Սիմֆերոպոլի, Կազանի, Սարատովի, Յալթայի, Ժիտոմիրի, Թիֆլիսի, Ռոստովի, Պերմի, Ղարսի, Երևանի, Ալեքսանդրապոլի բեմերում: Նրա կատարումներին արձագանքել է ժամանակի մամուլը:

Ատենախոսության նպատակն է Բեգլար Ամիրջանի կյանքի և ստեղծագործական գործունեության համակողմանի ուսումնասիրությունը:

Կարևորվել են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել Բ.Ամիրջանի մասին առկա երաժշտագիտական գրականությունը:
- Հետազոտել Երևանի Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (այսուհետ՝ ԳԱԹ) գտնվող Բ.Ամիրջանի արխիվի վավերագրերը:
- Ծանոթանալ երգչի կատարողական գործունեությանը ըստ ժամանակի հայալեզու և ռուսալեզու մամուլի արձագանքների:
- Քննության առնել Բ.Ամիրջանի կատարողական արվեստը՝ նրա համերգային գործունեությունը Ռուսաստանում և Իտալիայում:
- Բացահայտել նրա երգարվեստի նշանակությունը:

Թեմայի մշակվածության աստիճանը: Ծանրակշիռ է ՀԽՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի երաժշտագետների վաստակը Բ.Ամիրջանի գործունեության ուսումնասիրության ասպարեզում:

---

[1] Ամիրջան ազգանունը Բ.Ամիրջանյանն ընտրել է պրոֆեսիոնալ կարիերայի սկզբում: Տարբեր աղբյուրներում հանդիպում են՝ Ամիրջան, Ամիրջանյան, Ամիրջանյանց:

[2] Բ.Ամիրջանի խաղացանկն ընդգրկել է շուրջ 50 օպերաների բարիտոնային դերերգեր:

[3] **Թադևոսյան Ալ.,** Բեգլար Ամիրջան, Երևան, 1975, էջ 4:

Երգչի կյանքին և գործունեությանն առաջին անդրադարձը կատարել է Արվեստի ինստիտուտի Երաժշտության, այնուհետև՝ Ժողովրդական երաժշտության բաժինների վարիչ, արվեստագիտության դոկտոր Մաթևոս Մուրադյանը: «Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում» մենագրության (1970) չորրորդ՝ «Երաժշտական կատարողական արվեստը», գլխում, ի շարս Սինանյանների ընտանիքի, Նադեժդա Պապայանի, Ներսես Շահլամյանի, Ստեփան Էլմասի, Կարլ Միքուլիի և այլոց, հեղինակն անդրադառնում է նաև Բ.Ամիրջանին[4], նկատելով, որ «Դասական կոմպոզիտորների օպերային ստեղծագործությունների կատարումը հանդիսացել է նրա, որպես արտիստի, հիմնական կոչումը: Մայրաքաղաքային օպերային թատրոններում տասնյակ տարիների հաջողությունը նրան չի խանգարել, որ նա ելույթներ ունենա նաև հեռավոր քաղաքների օպերային թատրոններում, հանդես գա նույնիսկ ոչ մշտական օպերային խմբերում»[5]:

Հատկապես նշելի են Արվեստի ինստիտուտի Ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Ալեքսանդր Թադևոսյանի գիտական ուսումնասիրությունները: Նրա «Բեգլար Ամիրջան» գրքույկը (1975)[6] հայ մեծ երգչին նվիրված առաջին և միակ ուսումնասիրությունն է, որը ուրվագծում է երգչի ստեղծագործական դիմանկարը և հիմք ստեղծում հետագա առավել խոր ու համակողմանի ուսումնասիրության համար: Երգչի գործունեությանը Ալ.Թադևոսյանն էջեր է հատկացրել «Էջեր հայ-ռուսական երաժշտական կապերի պատմությունից (XIX դարի 2-րդ կես – XX դարի սկիզբ)» մենագրության (1977) մեջ[7]:

2021թ. սեպտեմբերի 28-29-ին, Դոնի Ռոստովում կայացած «Армяне юга России: история, культура, общее будущее» IV միջազգային գիտական կոնֆերանսի ընթացքում արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը ներկայացրել է երգչի գործունեության ռոստովյան էջը[8]:

Արժեքավոր է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Ռուզաննա Մազմանյանի՝ հետմահու հրատարակված «Հայ երաժշտական կյանքի տարեգրություն.

---

[4] Տե՛ս **Մուրադյան Մ.**, Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Երևան, 1970, էջ 292-296:

[5] **Մուրադյան Մ.**, Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Երևան, 1970, էջ 296:

[6] Տե՛ս ***Թադևոսյան Ալ.***, Բեգլար Ամիրջան, Երևան, 1975, էջ 3-77:

[7] Տե՛ս **Թադևոսյան Ալ.**, Էջեր հայ-ռուսական երաժշտական կապերի պատմությունից (XIX դարի 2-րդ կես – XX դարի սկիզբ), Երևան, 1977, էջ 112-117:

[8] Տե՛ս **Асатрян А.** Концерты Беглара Амирджаняна в Ростове-на-Дону, "Армяне юга России: история, культура, общее будущее", Материалы IV Международной научной конференции (г. Ростов-на-Дону, 28-29 сентября 2021 г.), Ростов-на-Дону, 2021, стр. 56-62.

1901-1910թթ.»[9], որտեղ հանդիպում ենք 20-րդ դարի առաջին տասնամյակում երգչի առանձին համերգների մասին մամուլի հիշատակություններին:

Ն.Թեյմուրազյանի և Զ.Սեմյոնովայի կազմած «Հայ ականավոր երգիչներ» մատենագիտության մեջ, որը նվիրված էր հայ երգիչներ Նադեժդա Պապայանին, Ներսես Շահլամյանին և Բեգլար Ամիրջանյանին, ներկայացված է Բ.Ամիրջանի կատարողական արվեստի վերաբերյալ՝ 1880-1971 թթ. ժամանակաշրջանում հայերեն և ռուսերեն լեզուներով պարբերական մամուլում լույս տեսած տպագրված հոդվածների ցանկը[10]:

Բարձր գնահատելով Բ.Ամիրջանի կյանքի և ստեղծագործական գործունեության ուսումնասիրության բնագավառում հայ երաժշտագետների աշխատանքը, միևնույն ժամանակ չենք կարող պնդել, որ այդ ասպարեզում ամեն ինչ ուսումնասիրված է, իսկ նյութը՝ սպառված:

Աշխատանքի գիտական նորույթը: Ատենախոսության մեջ առաջին անգամ՝

- Համակողմանիորեն ուսումնասիրվել է Բ.Ամիրջանի կյանքը և ստեղծագործական գործունեությունը և բացահայտվել երգչի դերն ու նշանակությունը հայ երաժշտական արվեստում:
- Ներկայացվել է Ամիրջան-օպերային արտիստի ստեղծագործական դիմանկարը:
- Անդրադարձ է արվել Ամիրջանի համերգային գործունեությանը:
- Գիտական շրջանառության մեջ են դրվել արխիվային մի շարք վավերագրեր, այդ թվում՝ երգչի «Իմ ինքնակենսագրությունը»[11], ինչպես նաև հանդիսականների կողմից նրան նվիրված ալբոմներն ու ուղերձները, որոնք գտնվում են ԳԱԹ Բ.Ամիրջանի ֆոնդում:
- Գիտական շրջանառության մեջ է դրվել ԳԱԹ Բ.Ամիրջանի ֆոնդում պահվող Մարիամ Թումանյանի «Երգիչ Բեգլար Ամիրջանի հիշատակին» վերնագրով արժեքավոր հուշագրությունը[12], որը վրիպել է Մարիամ Թումանյանի համառոտ կենսագրությունն ու հիշողությունները պարունակող ժողովածուից (2003)[13]: Հուշագրությունը, որտեղ հեղինակը մեջբերում է երգչի ելույթների մա-

---

[9] **Մազմանյան Ռ.**, Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, Երևան, 2006, էջ 23-25, 30-32, 36-37, 49-52, 59, 65-67, 74-76, 81-85, 96, 102, 104, 113-116, 119, 129, 140, 146, 156, 162-163:

[10] **Թեյմուրազյան Ն., Սեմյոնովա Զ.**, Հայ ականավոր երգիչներ (Մատենագիտական ցանկ), Երևան, 1974, էջ 51-79:

[11] Տե՛ս **Ամիրջան Բ.**, Իմ ինքնակենսագրությունը, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ. Ամիրջանի ֆոնդ, N 1 (ա, բ, գ):

[12] Տե՛ս **Թումանյան Մ.**, Երգիչ Բեգլար Ամիրջանի հիշատակին, ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ. Ամիրջանի ֆոնդ, N 27:

[13] Տե՛ս **Թումանյան Մ.**, Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները, Երևան, 2003, էջ 21-406:

սին տեղի և արտասահմանյան լրագրերից ու ամսագրերից հոդվածներ և գրախոսականներ, ինչպես նաև անձնական հիշողությունները, հնարավորություն է ընձեռում երգչի կյանքին և գործունեությանը հետևել ժամանակակցի աչքերով:

➢ Բացահայտվել և գիտական շրջանառության մեջ է դրվել այն փաստը, որ Միլանում ռուսական առաջին գրադարան-ընթերցարանը հիմնել է հենց Բ.Ամիրջանը:

➢ Բացահայտվել է, որ Ամիրջանի 5 ձայնագրությունները կատարվել են ոչ թե Պետերբուրգում, այլ Թիֆլիսում, և հայտնաբերվել է դրանցից մեկի՝ Ալ.Պ. Բորոդինի «Իշխան Իգոր» օպերայից Իգորի «Ո՛չ քուն, ո՛չ հանգիստ» ("Ни сна, ни отдыха") արիայի թվային տարբերակը:

Ուսումնասիրության համար ***նյութ*** են ծառայել արխիվային վավերագրերը՝ Ամիրջանի «Իմ ինքնակենսագրությունը», Մարիամ Թումանյանի՝ «Երգիչ Բեգլար Ամիրջանի հիշատակին» հուշագրությունը, ինչպես նաև երգչի մասնակցությամբ տեղի ունեցած համերգների հայտագրերն ու ծրագրերը, Բ.Ամիրջանի մասին երաժշտագիտական գրականությունը, ժամանակի պարբերական մամուլի (այդ թվում՝ "Биржевые ведомости", "Ведомости С.-Петербургского градоначальства", "Донская речь", "Казбекъ", "Крымский курьер", "Новое время", "Петербургский листок", "Приазовский край", "Россия", "Русь", "Тифлисский листок", "Южный телеграф", «Արձագանք», «Բազմավեպ», «Գեղարուեստ», «Թատրոն և երաժշտություն», «Հորիզոն», «Մարտ», «Նոր դար», «Մարտակոչ», «Մշակ», «Տարազ» ևն) արձագանքները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ուսումնասիրության արդյունքները մի կողմից՝ անհրաժեշտ քայլ կդառնան հայ կատարողական արվեստի պատմության շարադրման ճանապարհին և կարող են ընդգրկվել բուհական համապատասխան դասընթացներում, մյուս կողմից՝ ելակետ կդառնան հայ երգարվեստի մյուս երախտավորների կատարողական արվեստի հետազոտության համար:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի 2022թ. օգոստոսի 11-ի նիստում: Աշխատանքի հիմնական դրույթները տպագրվել են Հայաստանում հրատարակվող գրախոսվող գիտական պարբերականներում (ԿԱՆԹԵՂ, «Հանդես» և «Հայագիտական հանդես»), զեկուցվել են ինչպես Հայաստանում գումարված ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասնմեկերորդ (Երևան-Արզական, 30 սեպտեմբերի – 2 հոկտեմբերի, 2016) և տասներկուերորդ (Երևան, 22-23 նոյեմբերի, 2017) նստաշրջաններում, այնպես էլ Ռուսաստանի Դաշնությունում կազմակերպված "Искусство и художественное образование в контексте межкультурного взаимодействия" (20 հոկտեմբերի, 2017, Կազան) և "Национальная опера в контексте музыкально-исторического процесса" (13 ապրիլի, 2021, Ուֆա)

միջազգային գիտագործնական կոնֆերանսներում ու հրատարակվել են զեկուցումների ժողովածուներում:

Աշխատության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (Գլուխ առաջին՝ «Կենսագրական փաստեր», Գլուխ երկրորդ՝ «Բեգլար Ամիրջանը՝ օպերային երգիչ», Գլուխ երրորդ՝ «Բեգլար Ամիրջանի համերգային գործունեությունը»), եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, նշված են նպատակն ու խնդիրները, գնահատված է ուսումնասիրվող թեմայի գիտական մշակվածության աստիճանը, ներկայացված է գրականության տեսությունը, շեշտված է աշխատության գիտական նորույթը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ

Բեգլար Ամիրջանյանը ծնվել է 1868թ. հուլիսի 2-ին Թիֆլիսում: Հայրը՝ Աստվածատուր Ամիրջանյանը, Թիֆլիսում հայտնի պղնձագործ էր և ուներ իր սեփական խանութը: «...մեծ հրդեհը հորս խանութը ոչնչացրեց – կլանեց մի մասը կրակը, և մյուս մեծ մասը ավազակ մարդիկ դուրս տարան խանութից, և այդ եղավ պատճառը հորս մահվան 1872 թվին՝ թողնելով մորս երիտասարդ հասակում, երեք զավակներով (ես այն ժամանակ 4 տարեկան էի), անապահով դրության մեջ»[14]:

1886թ. առաջին աստիճանի վկայականով Բ.Ամիրջանյանն ավարտում է Ներսիսյան դպրոցը և որպես հայկական եկեղեցու երգչախմբի խմբավար և մենակատար հրավիրվում Կոջոր գյուղ: Շուտով Մ.Եկմալյանի հրավերով Ամիրջանը մեկնում է Պետերբուրգ և ծառայության անցնում Պետերբուրգի հայկական եկեղեցում՝ որպես երգչախմբի նոր կազմի անդամ՝ կատարելով Պատարագի կարևոր մեներգային հատվածները:

Ամիրջանյանի ձայնը մեծ տպավորություն է թողնում Պետերբուրգի հայկական եկեղեցի հաճախող հասարակության, այդ թվում՝ Հովհաննես Այվազովսկու վրա: Վերջինս հաջորդ Պատարագին գալիս է ընկերոջ՝ Պետերբուրգի կոնսերվատորիայի դիրեկտոր Անտոն Ռուբինշտեյնի հետ: Պատարագից հետո Ռուբինշտեյնը Բեգլարին խորհուրդ է տալիս հաջորդ օրը գնալ կոնսերվատորիա և մասնակցել ընդունելության քննություններին: 1886թ. սեպտեմբերի 12-ին Բ.Ամիրջանն ընդունվում է Պետերբուրգի կոնսերվատորիա և սովորում Կամիլլո Էվերարդիի դասարանում:

1888թ. ստեղծագործական անհամաձայնություն է ծագում Էվերարդիի և Ռուբինշտեյնի միջև. Էվերարդին թողնում է Պետերբուրգի կոնսերվատորիան և տեղափոխվում Կիև: Բ.Ամիրջանյանը փոխադրվում է Ստանիսլավ Գաբելի դա-

---

[14] Տե՛ս **Ամիրջան Բ.,** Իմ ինքնակենսագրությունը:

սարան: Ցավոք՝ «Գաբելի մեթոդիկան ինձ վրա վատ ազդեցություն գործեց, և ես շուտով հիվանդացա կոկորդի հիվանդությամբ, սկսեցի բուժվել, բայց հենց սկսում էի երգել, դարձյալ կրկնվում էր ցավը»[15]:

Բ.Ամիրջանյանի կյանքում շրջադարձային էր հանդիպումն իտալացի երգիչ, բարիտոն Անտոնիո Կոտոնիի հետ. նա խորհուրդ է տալիս մեկնել Միլան և ուսումը շարունակել Միլանի կոնսերվատորիայում[16]: «Միլանից գրում են «Նովոստի» լրագրին, որ Պետերբուրգի Կոնսերվատորիայի նախկին աշակերտ պ. Բեգլար Ամիրջանյանցը, որ գեղեցիկ տեմբրով մի ուժեղ բարիտոն է, այս օրերս ընդունուել է իբրև բոլոր մրցողների մէջ ամենաընտիրը, Միլանի կոնսերվատորիան: Իտալիայում երգեցողութեան յայտնի պրոֆեսոր Ռոնկոնին[17] մի փառավոր ապագայ է գուշակում երիտասարդ երգչի համար»[18]:

Ուսումնառության ընթացքում Բ.Ամիրջանյանը Միլանում ստեղծում է ռուսական առաջին գրադարանը[19]:

1894թ. հունիսի 21-ին Միլանի կոնսերվատորիան առաջին աստիճանի մեդալով և 600 լիրա պարգևով ավարտելուց հետո Ամիրջանը սկսում է իր արտիստական փայլուն կարիերան, որը շարունակվում է մինչև 1916 թվականը:

1916թ. մայիսի վերջերին Ամիրջանը հեռագիր է ստանում Թիֆլիսից: Նրան տեղեկացնում են, որ մայրը ծանր հիվանդ է, և շտապ կանչում են Թիֆլիս: Բ.Ամիրջանը կնոջ[20] հետ ճանապարհ է ընկնում՝ բնակարանն ու ողջ ունեցվածքը թողնելով ծառաների հսկողության տակ: Շուտով Ամիրջանին լուր է հասնում, որ իր բնակարանը կողոպտված է: Կորցնելով Պետերբուրգի բնակարանը և ամբողջ ունեցածը՝ Բ.Ամիրջանը վճռում է մնալ Թիֆլիսում:

1917-ից Բ.Ամիրջանն զբաղվում մանկավարժությամբ: 1921-ին երաժիշտներ Պորտուգալովի և Զոմերի հետ միասին ստանում են քաղաքի զանազան թաղամասերում ժողովրդական երաժշտական դպրոցներ բացելու իրավունք և

---

[15] Տե՛ս **Ամիրջան Բ.,** Իմ ինքնակենսագրությունը:

[16] Տե՛ս **Սալնազարյան Գ.,** Բեգլար Ամիրջանի ուսումնառությունը Պետերբուրգի և Միլանի կոնսերվատորիաներում, Հայագիտական հանդես, 2017, 3 (37), էջ 188-196:

[17] Մեր կարծիքով, խոսքն իտալացի օպերային երգիչ, բաս-բարիտոն, մանկավարժ Սեբաստիանո Ռոնկոնիի (1814-1900) մասին է:

[18] Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 30 հոկտեմբերի, 1892, N 126, էջ 2:

[19] Տե՛ս **Салназарян Г.** Беглар Амирджанян и первая русская библиотека-читальня в Милане, Искусство и художественное образование в контексте межкультурного взаимодействия, Материалы VI Международной научно-практической конференции, 20 октября 2017г., Казань, 2017, 224-233.

[20] Ամիրջանի միակ քույրն ամուսնացած էր Գանձակում, և Ամիրջանը հաճախ է հյուրընկալվում նրա տանը: Գանձակում էլ նա ծանոթանում է իր ապագա կնոջ՝ Մարիամ Ալեքսանդրյան-Մելիքյանի հետ: 1907-ին նրանք ամուսնանում են: Ու թեև նրանք երեխաներ չեն ունեցել, սակայն ապրել են սիրով և համերաշխությամբ, և Ամիրջանը մահացել է հավատարիմ կնոջ ձեռքերի վրա:

բացում են հինգ երաժշտական դպրոց: Առաջին բացված դպրոցում Ամիրջանը ստանձնում է փոխվարիչի պաշտոնը և երգեցողություն դասավանդում: 1929-ին նա հրաժարվում է փոխվարիչի պաշտոնից ու շարունակում աշխատանքը որպես երգեցողության ուսուցիչ մինչև 1932-ի նոյեմբերի վերջ[21]: 1937թ. աշնանը նա կաթվածահար է լինում, ընկնում անկողին և 7 ամիս անց՝ մահանում:

Դժվար է ասել, թե ինչպես կդասավորվեր Բ.Ամիրջանի ստեղծագործական կյանքը, եթե նա 1920 թվականին մշտական բնակություն հաստատեր Սովետական Հայաստանում: Արդյո՞ք նրան Ալեքսանդր Մյասնիկյանը չի հրավիրել Երևան: Եթե այո՝ ապա ինչու՞ նա չի տեղափոխվել Երևան: Մյուս կողմից՝ Ռոմանոս Մելիքյանի խնդրանքով է նա գրել իր Ինքնակենսագրությունը, որը, ցավոք, մնացել է անավարտ: «Ազնիվ բարեկամ Ռոմանոս Մելիքյանին, Համաձայն Ձեր գրության փորձում եմ գրի առնել այն բոլոր տպավորությունները, կամ բոլոր ինձ շրջապատող պայմանները, որոնք այսպես թե այնպես նշանակություն ունեցան իմ ամբողջ կյանքի, իմ երաժշտական գործունեության զարգացման վրա», կարդում ենք Մարիամ Թումանյանի՝ «Երգիչ Բեգլար Ամիրջանի հիշատակին» վերնագրով հուշագրության մեջ, որն իշխանուհին ավարտել է Թբիլիսիում, 1941թ. հունվարի 25-ին[22]:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԲԵԳԼԱՐ ԱՄԻՐՋԱՆԸ՝ ՕՊԵՐԱՅԻՆ ԵՐԳԻՉ

Ամիրջան-օպերային արտիստի դեբյուտը կայացավ 1894թ. սեպտեմբերի 1-ին, Կիոջիա քաղաքում, «Կիոջայում երբեք չինչած»[23] Շ.Գունոյի «Ֆաուստ» օպերայում Վալենտինի դերերգով: Բոլոր կողմերից Ադրիատիկի ալիքներով ողողված քաղաքում հանդես եկավ «պարթեւական հասակով մի առոյգ անձն և համակրելի երիտասարդ, հազիւ 28-30 տարեկան, որոյ արամազդեան թուխ յօնից ներքեւ կը փայլին երկու խոշորագեղ և կենդանի ականողիք, և որ իւր ընտանի, բարեկիրթ և համեստ վարմունքով գիտէ շուտով ամենուն սիրելի և յարգելի ընել զինքը»[24]:

Ինքնակենսագրության մեջ Բ.Ամիրջանը ներկայացրել է իր դեբյուտը: «Երեկոյան ժամը 6-ից ես արդեն գտնվում էի թատրոնում ու հագնում Վալենտինի շորերը ու պատրաստվում էի: Թե՛ Ֆաուստը և թե՛ Մեֆիստոֆելը իտալացի հայտնի արտիստներ էին և շատ լավ էին ելույթ ունենում: Սկսվեց երկրորդ գործողությունը, խումբը կատարեց իր մասը, ահա լսվեցին Վալենտինի դուրս

---

[21] 1931թ. Ամիրջանը նկարահանվել է Վրաստանում առաջին ձայնային գեղարվեստական ֆիլմում: Վրացի դերասան և ռեժիսոր Լեո Էսակիայի «Շակիր» կամ «Ռոտե Ֆանե» ֆիլմում Ամիրջանը խաղացել է գլխավոր հերոսներից մեկի՝ Վալտերի դերը:

[22] Տե՛ս **Թումանյան Մ.**, Երգիչ Բեգլար Ամիրջանի հիշատակին:

[23] Գիտություն և արվեստ, «Արձագանք», Թիֆլիս, 5 հոկտեմբերի, 1894, N 115:

[24] **Հ.Բ.Ս.**, Ազգային առաջին վառերգակն եւ Գունոյի Ֆաուստն ի Քիոճիա, «Բազմավէպ», 1894, N 12, էջ 549:

գալու ակորդները: Ես կանգնած եմ կուլիսների առաջ, ձեռքս առած Մարգարիտի պատկերով մեդալիոն, ու առաջ եմ գալիս: Սիրտս անհանգիստ էր, ու ձեռքերս դողդողում էին: Հետևիցս թե՛ անտրեպրենյորը և թե՛ ռեժիսորը բավականին բարձր ձայնով քաջալերում էին ինձ: Հենց բերանս բացի և առաջին նախադասությունը երգեցի, այնպիսի ձայն հնչեց, մանավանդ աղոթքի տեսարանի ժամանակ, որ ամբողջ հասարակությունը ոտքի բարձրացավ և ծափահարելով ու «բրավո» կանչելով՝ ստիպեցին կրկնել աղոթքը: Ինչ ասել կուզե, որ ես, հափշտակված իմ հաջողությանս վերա, ավելի ազատ և վստահ տվի ձայնիս ազատություն, բարձր նոտան պահեցի այնքան, որ հասարակությունը սկսեց ծափահարել»[25]:

Ամիրջանի դեբյուտն արժանացավ նաև երաժշտական քննադատության բարձր գնահատականին, որն արտահայտվեց իտալական «L'Adriatico», «Il Gazzettino», «Flora», «Rivista Teatrale Melodrammatico» թերթերի էջերում:

Կիոջայից, որտեղ Ամիրջանը հանդես եկավ նաև Վ.Բելինիի «Պուրիտաններ» օպերայում Ռիկարդոյի դերերգով, թատերախումբը մեկնում է Ջենովա և ներկայացնում «Ֆաուստն» ու Դոնիցետիի «Ֆավորիտուհի» օպերան, որտեղ Ամիրջանը կատարում է Կաստիլիայի թագավոր Ալֆոնս IX-ի դերերգը: Ջենովայից հետո Ամիրջանը երգում է Թուրին քաղաքում և Միլանի հռչակավոր «Լա Սկալա» օպերայի թատրոնում:

1895 թ. հունիսի 1-ի և 16-ի Ջենովայում տեղի են ունենում Դոնիցետիի «Լուչիա դի Լամերմուր» և «Ֆավորիտուհի» օպերային ներկայացումները Բ.Ամիրջանի և հայ նշանավոր օպերային երգիչ, տենոր Արշակ Կոստանյանի մասնակցությամբ, որոնք, ըստ տեղի «Suplemento al Caffaro» լրագրի, անցել են լեփ-լեցուն դահլիճներում: «Հանդիսականաց բազմութիւնը անթիւ և անհամար էր, թատրոնին մէջ ամենևին պարապ տեղ չէր մնացած, և գրեթէ մեծ բազմութիւն մը զրկուած մնաց այս հրաշալի թատերական հանդեսի տեսութենէ, կանխապես չկարանալով իրենց յատուկ տեղեր բռնել»[26]:

Հանդիսատեսը բարձր է գնահատել հայ օպերային երգիչների ելույթները և անվերջանալի ծափահարություններով ստիպել է մի քանի անգամ կրկնել օպերային ստեղծագործությունների լավագույն հատվածները: «Ամիրջան՝ Ալֆոնսոս արքայի տարազով ընտիր արուեստագէտ հանդիսացաւ, երկիւղած երգիչ և փափուկ, հանճարեղ դերասան: A tante amor երգովն՝ և երրորդ արարուածին վսեմ վերջաւորութեամբ, խուռն բազմութեան ծափահարութեան արժանացաւ»,- գրել է ջենովական «Suplemento al Caffaro» լրագիրն[27] ու հավելել. «Ուրախալից ընդունելութեան արժանացաւ վառերգակն Ամիրջան, որ Ալֆոնսոս արքայի տարազով կրցաւ ցոյց տալ իր ներհուն, արգոյ և գերազանց

---

[25] **Ամիրջան Բ.**, Իմ ինքնակենսագրությունը:

[26] Հայ թատերգակք Յիտալիա, «Բազմավեպ», Վենետիկ, 1895, N 7, էջ 334-335:

[27] Տե՛ս նույն տեղում, էջ 335:

արուեստը»[28]:

Ստանալով բազմաթիվ առաջարկներ՝ Ամիրջանը կանգնում է ընտրության առջև. գնալ Իսպանիա և Բարսելոնայից շարունակել իր հաղթարշավը Եվրոպայու՞մ, թե՞ կնքել պայմանագիր ու գնալ հեռավոր Հարավային Ամերիկա՝ երգելու համաշխարհային օպերային հայտնի աստղերի հետ: Ամիրջանը որոշում է իտալական խմբի կազմում մեկնել Մոսկվա և երգել «Էրմիտաժ» թատրոնում: 1895-1896 թթ. Մոսկվայի «Էրմիտաժ» թատրոնում Բ.Ամիրջանը հանդես է եկել Վալենտինի (Շ.Գունո՝ «Ֆաուստ»), Ժորժ Ժերմոնի (Վերդի՝ «Տրավիատա»), Ռիգոլետտոյի (Վերդի՝ «Ռիգոլետտո»), Կոմս դի Լունայի (Վերդի՝ «Տրուբադուր») և Ամոնասրոյի (Վերդի՝ «Աիդա») դերերգերի կատարմամբ:

Մոսկվայի կայսերական թատրոնն Ամիրջանին առաջարկում է փորձնական 2 ներկայացման մեջ հաջող հանդես գալու դեպքում կնքել 3 տարվա պայմանագիր՝ որպես թատրոնի առաջատար մենեներգիչ: Նրա դեբյուտը Մոսկվայի Կայսերական թատրոնում տեղի է ունենում 1896 թ. ապրիլի 5-ին՝ «Աիդա» օպերայում Ամոնասրոյի դերերգով: Ամիրջանն ընդունվում է Մոսկվայի Կայսերական թատրոն, որտեղ աշխատում է 1896թ. սեպտեմբերից մինչև 1903թ.:

Առաջին թատերաշրջանում նրա առաջին ելույթը՝ 1896 թ. սեպտեմբերի 1-ին «Ֆաուստում», արժանանում է քննադատների բարձր գնահատականին: «Երգում էին մեր հին ծանոթները,- նշել է թերթերից մեկը,- Դոնսկոյը, Վլասովը, Ֆոստրեմը: Վալենտինի դերերգով հանդես եկավ նորերս Մեծ թատրոն ընդունված երիտասարդ երգիչ Բ.Ամիրջանը, մի նոր բարիտոն՝ լիրիկական ու գեղեցկահնչուն ձայնով, որը հեշտորեն բարձրանում է մինչև վերին ռեգիստրի վերջնասահմանի նոտաները»[29]: Ներկայացմանն անդրադարձավ թիֆլիսյան «Արձագանքը». «Ներկայ սեպտեմբերի 1-ին Կայսերական մեծ թատրոնում տալիս էին «Ֆաուստ» օպերան, ուր Վալենտինի դերը մեծ հաջողութեամբ կատարեց մեր շնորհալի երգիչ բարիտոն Բեգ. Ամիրջանեանը»[30]:

1897 թ. ապրիլի 24-ին Բ.Ամիրջանը Մոսկվայի կայսերական թատրոնի բեմում հանդես է գալիս դերերգով, որը դառնում է նրա խաղացանկի անբաժանելի մասը: Խոսքը Դևի դերերգի մասին է՝ Ա.Ռուբինշտեյնի համանուն օպերայից: Սա նաև երգչի դեբյուտն էր ռուսական օպերային արվեստում[31]:

«Մշակը» 1897թ. մայիսի 10-ի համարում տպագրում է Ալ.Ծատուրյանի կարծիքը Մոսկվայից՝ Ամիրջան-Դևի խաղի վերաբերյալ՝ գրված նրա առաջնա-

---

[28] Նույն տեղում:

[29] **Թադևոսյան Ալ.**, Էջեր հայ-ռուսական երաժշտական կապերի պատմությունից (XIX դարի 2-րդ կես – XX դարի սկիզբ), էջ 112: "Театральные известия", 5 сентября, 1896:

[30] Մի հայ երգիչ Մոսկվայի Կայսերական թատրոնի բեմի վրայ, «Արձագանք», Թիֆլիս, 13 սեպտեմբերի, 1896, N106, էջ 2:

[31] Ցավոք, 1894 թ. նոյեմբերի 20-ին Ռուբինշտեյնը հեռացել էր կյանքից և չտեսավ ու չլսեց Ամիրջան-Դևին:

խաղից 1 շաբաթ անց՝ մայիսի 1-ին: «Անցեալ նամակում խոստացանք խօսել երգիչ Ամիրջանեանի մասին: Նա բեմ դուրս եկաւ ապրիլի 24-ին, Կայսերական թատրօնում, «Դեմօն» օպէրայում և երգեց հէնց «Դեմօնի» ծանր ու պատասխանատու դերը: Նոյն բեմի վրա մենք պ. Ամիրջանեանցին տեսել ենք ուրիշ օպերաներում – «Աիդա», «Ֆաուստ», «Ռօմէօ և Ջուլիէտ», սակայն այդ օպերաներից ոչ մէկում նրա դերը չունէր այն մեծ ու էական նշանակութիւնը, ինչպէս «Դեմօնում», որտեղ ինքը Դեմօնը օպերայի կենտրոնն է կազմում:

Ամիրջանեանի ձայնը անպայման հարուստ ու զօրեղ ձայն է: Բաւականին դուրեկան է և ձայնի տեմբրը: Բարձր նօտաները նա առնում է ամենայն հեշտութեամբ և նրանց կարողանում է բաւական ժամանակ պահել նոյն բարձրութեան վրա, որ մեծ առաւելութիւն է համարվում և պարզ ապացոյց է նրա ձայնի անվիճելի զօրեղութեան և ուժգնութեան»[32]:

Ռուբինշտեյնի «Դևի» բեմադրությունը ոչ միայն կարևոր իրադարձություն էր հայ բարիտոնի ստեղծագործական կյանքում, այլև հիշարժան օր ռուսական օպերայի պատմության մեջ: Այդ օրը Մեծ թատրոնում տեղի ունեցավ Լեոնիդ Սոբինովի դեբյուտը. բոլորին անհայտ երիտասարդ իրավաբանը փայլուն կատարեց Սինոդալի դերերգը, որից հետո, «շրջանցելով ծայրամասային թատրոններում այն ժամանակ պարտադիր և անհրաժեշտ վերապատրաստումը՝ հրավիրվում է Մոսկվայի Մեծ թատրոնի թատերախումբ»[33]: Իրեն «իրավաբանների մեջ՝ երգիչ, երգիչների մեջ՝ իրավաբան» համարող Սոբինովը շատ էր հուզվում ելույթից առաջ: Փորձերից մեկի ժամանակ, լսելով նրա ձայնը, Ամիրջանը քաջալերել է երիտասարդին և գուշակել փայլուն հաջողություն: «Հետագայում Սոբինովը շատ անգամ է երախտագիտությամբ հիշել Ամիրջանի ընկերական ջերմ վերաբերմունքը, այն, որ նա իր սկսնակ բեմական ընկերոջ հանդեպ մարդկայնորեն այդքան ուշադիր ու զգայուն գտնվեց...»[34]:

1898 թվականն Ամիրջանը եզրափակում է «Տրուբադուր» օպերայում՝ Կոմս դի Լունայի դերերգով, որը կատարում է փայլուն: «Մօսկվայից մեզ գրում են,- կարդում ենք «Մշակի» 1899թ. հունվարի 9-ի համարում,- Այսօր, դեկտեմբերի 30-ին, առիթ ունեցանք Կայսերական թատրօնում լսելու պ. Բ.Ամիրջանին՝ «Տրուբադուր» օպերայում, ուր նա կատարում էր կոմս Լունայի դերը: Աջողութիւնն այնքան մեծ էր, որ համարձակ կարող ենք ասել, թէ դա շնորհալի դերասանի կատարեալ հաղթանակն էր: Երկրորդ գործողութիւնից յետոյ, հասարակութեան կողմից նրան շնորհեցին մի մեծ ու շքեղ դափնեայ պսակ A գլխագրով, զարդարված ժապավէններով: Թատրօնում թէև մի քանի դժգոհներ էլ գտնվեցին, բայց դրանք միայն իւղ ածեցին կրակի մէջ և հասարակութիւնը խեղդեց դրանց ձայնը դղրդացնելով ամբողջ թատրօնը բուռն կեցցէներով:

---

[32] **Ծատուրյան Ալ.,** Նամակ Մոսկվայից, «Մշակ», Թիֆլիս, 10 մայիսի 1897, N 54, էջ 2:
[33] **Львов М.** Русские певцы, Москва, 1965, стр. 43.
[34] **Թադևոսյան Ալ.**, Բեգլար Ամիրջան, էջ 24:

Այնուհետև ամենայն մի ակտից յետոյ բեմ էին կանչում պ. Ամիրջանին»[35]:

Մոսկվայի Մեծ թատրոնի մեներգիչ Ամիրջանը հրավիրվում էր հյուրախաղերի՝ ռուսական խոշոր քաղաքների օպերային թատրոններ: Նա ելույթներ է ունեցել Վորոնեժում (1899), Պերմում (1899-1900, 1902), Իրկուտսկում (1900-1901), Դոնի Ռոստովում (1901): 1901-ին Նիժնի Նովգորոդում Ալ.Բորոդինի «Իշխան Իգոր» օպերայում երգել է դեռ Մեծ թատրոնից իր խաղընկեր Ֆ.Շալյապինի հետ: Երգել է Կազանում, Սարատովում (Ն.Ի.Սոբոլշիկովի թատերախմբում), Աստրախանում (1901-1902), Վորոնեժում (1903): 1903-ին Ամիրջանը համերգներով այցելել է Սիմֆերոպոլ, Կիև, Խարկով և Բաքու:

1899 թ. սեպտեմբեր – 1900 թ. փետրվար թատերաշրջանն Ամիրջանը անց է կացնում Պերմում՝ հանդես գալով Ռուսլանի, Իգորի, Դևի, Կոչուբեյի, Նելուսկոյի, դի Լունայի դերերգերով և արժանանալով մամուլի, մասնավորապես “Пермские ведомости” թերթի դրվատական ռեցենզիաներին: Պահպանվել է հետևյալ ուղերձը.

«Խորապես հարգելի՛ Բեգլար Աստվածատուրի.

Թո՛ւյլ տվեք մեզ այսօր՝ Ձեր բեմական տոնակատարության օրը, արտահայտել Ձեզ անկեղծ և սրտագին շնորհակալությունը այն բարձր գեղագիտական հաճույքի համար, որ մենք ստանում էինք բազմաթիվ անգամ ձեր գեղեցիկ, ուժեղ ձայնից և զգացմունքով կատարած այնպիսի պատասխանատու պարտիաներից, ինչպիսիք էին Իգորը, Ռուսլանը, Դեմոնը, Նելուսկոն և շատ ուրիշներ: Միևնույն ժամանակ, առիթից օգտվելով, թո՛ւյլ տվեք արտահայտել Ձեզ մեր ջերմ համակրանքը ոչ միայն իբրև տաղանդավոր արտիստի, այլև ինչպես բարի և ընդառաջող անձնավորության: Հոգու բարությունը տաղանդի ամենալավ զարդն է, և մենք լիահույս ենք, որ Դուք, բնությունից օժտված լինելով և՛ մեկով, և՛ մյուսով, կկարողանաք նվաճել վոկալ արվեստի լայն շրջանի սիրահարների սրտերը, ինչպես դուք նվաճեցիք պերմցիների երախտագետ սրտերը: Այդ պատճառով ցանկանում ենք Ձեզ երկար ու երկար տարիներ, իսկ հոչակն արտիստական աշխարհում Ձեզ միանգամայն ապահովված է:

Կանանց և տղամարդկանց 75 ստորագրություն:

Պերմ քաղաք, 1900 թ.»[36]:

1900 թ. սեպտեմբերից Ամիրջանը հանդես է գալիս Իրկուտսկում, ռեժիսոր Ա.Ա. Կրավչենկոյի և դիրիժոր Դ.Դ. Դուդիշկինի կազմակերպած օպերային խմբի կազմում մասնակցում «Դև», «Աիդա», «Իշխան Իգոր», «Պիկովայա դամա», «Ռուսլան և Լյուդմիլա», «Ասկոլդի գերեզմանը», «Ռոգնեդա», «Ֆաուստ», «Կարմեն», «Սամսոն և Դալիլա», «Մարգարե», «Տրուբադուր», «Աֆրիկուհին», «Պայացներ» և այլ օպերաներում[37]:

---

[35] «Մշակ», Թիֆլիս, 9 հունվարի, 1899, N 3, էջ 2:

[36] Տե՛ս **Թումանյան Մ.**, Երգիչ Բեգլար Ամիրջանի հիշատակին:

[37] Տե՛ս **Թադևոսյան Ալ.**, Բեգլար Ամիրջան, էջ 34:

Ամիրջանի ելույթներն ընդունվել են մեծ ոգևորությամբ: Դրա մասին են վկայում նրա ստացած ընծաները, նրա արխիվում գտնվող 2 ալբոմներն ու մեկ ուղերձը: Ճապոնական ճաշակով և Ճապոնիայի տեսարաններով զարդարված ալբոմներից մեկի առաջին էջում գրված է՝ «Ի բարի հիշատակ տաղանդավոր Արտիստին և համակրելի մարդուն իր երկրպագուներից»[38]:

Լուսանկարների համար նախատեսված մյուս ալբոմի կազմի վրա, որտեղ ամրացված է բրոնզյա զարդ, զետեղված է հետևյալ մակագրությունը՝ «Անմոռանալի սիրելի արտիստ Բեգլար Ամիրջանին ի հիշատակ իր բարեկամներից»[39]:

Եղել է ևս մեկ ալբոմ, որն առայժմ չգտանք, սակայն ուղերձը պահպանվել է: «Ընդունեք այս ալբոմն ի հիշատակ այն քաղաքի, որտեղ դուք թողնում եք Ձեզ անկեղծ սիրող բարեկամներին: Մենք չենք մոռանա այն գեղարվեստական բարձր հաճույքը, որ Դուք մեզ պարգևեցիք Ձեր տաղանդով՝ որպես երգիչ և արտիստ:

Բայց մենք միաժամանակ Ձեզ բարձր ենք գնահատում որպես հրաշալի համակրելի անձնավորության, ով այդպես սրտացավորեն վերաբերվեց տեղի մտավորականության համեստ լուսավորության գործին:

Ելույթ ունենալով ժողովրդական համերգներին՝ Դուք այնքան մեծ ջանք ու ոգևորություն ներդրեցիք, ինչպես ոչ ոք չէր արել Ձեզ համար այս օտար, գրեթե անծանոթ քաղաքում: Դա առավել քան թանկ է, քանի որ մեր հասարակ ժողովուրդը հազվադեպ է հանդիպում արվեստի՝ իրենց բարձրությունից իջած իսկական քրմերի հետ: Ժողովրդական լսարաններում Դուք ջերմ սրտագին ողջույնով էիք արձագանքում մեր գորշ հասարակության հիացմունքին:

Իրկուտսկ 1901 թ.»[40]:

ԳԱԹ Բ. Ամիրջանի ֆոնդում հայտնաբերեցինք նաև առանձին ուղերձ Իրկուտսկից՝ երեսուն ստորագրություններով, որտեղ մասնավորապես գրված է՝ «Մնաք բարով, սիրելի Բեգլար Բոգդանովիչ: Անկեղծորեն ցանկանում են կրկին հանդիպել Ձեզ հետ: Ի սրտե մաղթում ենք հաջողություն Ձեր արտիստական գործունեության մեջ, և թող այն միշտ ուղեկցվի հասարակության և արտիստի միջև այսպիսի ջերմ համակրանքով»[41]:

Գլխում մանրամասն ներկայացված է Ամիրջանի օպերային արտիստական գործունեությունն ինչպես Մոսկվայի Կայսերական մեծ թատրոնում (1896-1903), Թիֆլիսում (1903-1904)[42] և Պետերբուրգի ժողովրդական տան օպերա-

---

[38] Տե՛ս **Թումանյան Մ.**, Երգիչ Բեգլար Ամիրջանի հիշատակին:

[39] Նույն տեղում:

[40] Նույն տեղում:

[41] Նույն տեղում:

[42] Տե՛ս **Սալնազարյան Գ.,** Բեգլար Ամիրջանի թիֆլիսյան հյուրախաղերը, Հանդես. գիտական հոդվածների ժողովածու, 2017, 19, էջ 172-177:

յում (1904-1916), այնպես էլ Ռուսաստանի տարբեր քաղաքներում:

Օպերային ներկայացումներում Բ.Ամիրջանի խաղընկերներն էին ռուսական օպերային արվեստի լավագույն ներկայացուցիչները, այդ թվում՝ բարձր բաս Ֆյոդոր Շալյապինը, քնարական տենոր Լեոնիդ Սոբինովը, լիրիկո-դրամատիկական տենոր Լավրենտի Դոնսկոյը, տենոր Նիկոլայ Ֆիգները, կոլորատուրային սոպրանո Նադեժդա Պապայանը, քնարադրամատիկական տենոր Արշակ Կոստանյանը և այլք:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԲԵԳԼԱՐ ԱՄԻՐՋԱՆԻ ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Բ.Ամիրջանը հանդես է եկել ոչ միայն որպես փայլուն օպերային երգիչ, այլև կամերային երաժշտության ասպարեզում՝ որպես մենակատար ու անսամբլիստ: Որպես կամերային երգիչ նա ելույթներ է ունեցել դեռևս Պետերբուրգի կոնսերվատորիայում ուսումնառության ընթացքում: 1887-ից նա մասնակցել է ուսանողական երեկոներին և հրավիրվել երգելու տարբեր միջոցառումների ժամանակ:

«Մշակ» օրաթերթի 1890 թվականի մայիսի 31-ի համարից տեղեկանում ենք, որ Բ.Ամիրջանը նույն թվականի մարտի 21-ին և 29-ին Պետերբուրգում ունեցել է համերգ «և ինչպէս երևում է Պետերբուրգի լրագիրների ռեցէնզիաներից, բաւական աջողութիւն է գտել»[43]: Պետերբուրգյան մամուլը, մասնավորապես՝ “Новости”, “Сын Отечества”, “Петербургский листок”, “Минута”, “Биржевые ведомости” թերթերը մեծ գովեստով են արտահայտվել երգչի ձայնական տվյալների մասին, միևնույն ժամանակ անհրաժեշտ գտել, որպեսզի նա մշակի իր զորեղ ձայնը:

Միլանի կոնսերվատորիայում սովորելու ընթացքում՝ 1893թ. ամռանը, Ամիրջանը համերգներով հանդես է եկել Թիֆլիսում և Կոջորում: Նրա հետ ելույթ են ունեցել Նադեժդա Պապայանը և Պետերբուրգի Մարիինյան թատրոնի մեներգիչ, տենոր Ներսես Շահլամյանը: Նույն թվականի սեպտեմբերի սկզբին Ամիրջանն առաջին անգամ այցելել է Դոնի Ռոստով[44]: Երիտասարդ երգչի համերգները սեպտեմբերի 9-ին և 11-ին անցել են մեծ հաջողությամբ[45]: Առաջին համերգի ժամանակ արտիստի երգած յուրաքանչյուր համար առաջ է բերել ծափահարությունների հեղեղ[46]: Իսկ երկրորդ համերգի վերաբերյալ ծավալուն գրախոսականում նշվել է. «Ամիրջանյանն օժտված է վոկալ մեծ ձիրքով՝ նրա բարիտոնը հսկայական է իր դիապազոնով, ուժեղ, իսկ բնույթով՝ դրամա-

---

[43] Ներքին լուրեր, «Մշակ», Թիֆլիս, 31 մայիսի, 1890, N 60, էջ 2:

[44] Տե՛ս Театр и искусство, “Приазовский край”, Ростов-на-Дону, вторник, 7 сентября, 1893 N 229, стр. 3.

[45] Տե՛ս **Асатрян А.** Концерты Беглара Амирджаняна в Ростове-на-Дону, стр. 56-62.

[46] Տե՛ս “Приазовский край”, Ростов-на-Дону, суббота, 11 сентября, 1893, N 232, стр. 3.

տիկ, ներքևի ռեգիստրում կրում է բասային երանգ»[47]:

Մի կողմից՝ բազմաթիվ համերգներ է կազմակերպել անձամբ Ամիրջանը, իսկ մյուս կողմից՝ սիրահոժար մասնակցել իր գործընկերների կազմակերպած երաժշտական միջոցառումներին:

Բազմաթիվ են հօգուտ տարբեր ուսումնական հաստատություններում սովորող կարիքավոր աշակերտների և ուսանողների, Անդրկովկասի աղքատ ադրբեջանցիների, Պետերբուրգի հայ ուսանողների, ռուս-թուրքական պատերազմից տուժած հայ գաղթականների, կանանց առողջության պահպանման, առևտրային վարժարանի գրադարանի միջոցների ավելացման, Պետերբուրգի Սուրբ Օլգա հիվանդանոցի հիվանդների համար և այլ նպատակներով կազմակերպված բարեգործական համերգներին Ամիրջանի մասնակցության վերաբերյալ տեղեկությունները: Ամիրջանը երբեք չի մերժել բարեգործական համերգներում անհատույց երգելու հրավերները:

1897 թ. փետրվարի 20-ին Մոսկվայի «Охотничий клуб» ակումբում տեղի է ունեցել հայկական բարեգործական միջոցառում՝ հօգուտ Մոսկվայի չքավոր հայերի: Ըստ համերգի հայտագրի՝ այն պիտի եզրափակեր ռոմանսը, որը պիտի կատարեր Ե. Ա.: «Սպասում էինք, հետաքրքրուելով, թէ արդեօք ո՞վ է Ե. Ա., անցաւ մի քանի րոպէ. հանդիսականների ուշադրութիւնը լարուած էր: Մին էլ տեսնես, կուլիսների ետևից արագ քայլերով դուրս եկաւ բարձրահասակ բարիտօն պ. Ամիրջանը: Դահլիճը յանկարծ այնպիսի սարսափելի ծափահարութեամբ և կեցցէներով թնդաց, որ շնորհալի երգիչը մի քանի րոպէ ստիպուած եղաւ գլուխ տալով սպասել, որ հասարակաց ուրախութեան աղաղակները փոքր ինչ հանդարտին, որ կարողանայ երգել: Բայց հազիւ երգեց հայերէն մի երկու երգ, ինչպէս ծափահարութիւնները սկսուեցան նոր ոյժերով. դա արդէն կատարեալ ցոյցերի բնաւորութիւն ստացաւ և մեզ համոզեց թէ պ. Ամիրջանը հասարակաց սիրելի դերասանն է»[48]: Համերգի վերջում հայ օրիորդների խումբը Ամիրջանի մասնակցությամբ երգում է «Կիլիկիա»-ն և «Զեյթունցիների քայլերգը», ինչը «շատ քաղցր տպաւորութիւն թողեց հասարակութեան վրայ»[49]:

1897 թ. մարտի 17-ին Բ.Ամիրջանը ելույթ է ունեցել Սանկտ Պետերբուրգում: «Պետերբուրգի «Лучь» և «Петербургские ведомости» լրագիրները մեծ գովասանքով են խօսում Մոսկվայի Կայսերական օպէրայի երգիչ Ամիրջանեանի մասին՝ մարտի 17-ին Պետերբուրգում տուած կօնցէրտի առիթով: «Лучь» լրագիրն ասում է. «Շահլամեանին Պետերբուրգի հասարակութիւնը արդէն ճանաչում է շատ կոնցէրտներից, որոնց մէջ Շահլամեան յայտնվել է իբրև գեղեցիկ տէնօր և ընդհանուր համակրութիւն է ձեռք բերել: Ինչ վերաբերում է պ. Ամիր-

---

[47] **Эмм,** Концерт г. Амирджаняна (Театр Е.В.Любова), "Приазовский край", Ростов-на-Дону, вторник, 14 сентября, 1893, N 235, стр. 3.

[48] Ներքին տեսություն, «Արձագանք», Թիֆլիս, 28 փետրվարի, 1897, N 24, էջ 3:

[49] Նույն տեղում:

ջանեանին, որ ավելի քիչ է ծանօթ Պետերբուրգի հասարակութեան, պէտք է ասենք, որ նա ցոյց տուեց այս անգամ իրան իբրև արդէն կատարելագործված բարիտօն, արտակարգ, ուժեղ, հնչուն, կանոնավոր ձայնով, իբրև մի արտիստ, որ գիտէ երգել անկեղծ, ոչ շինծու զգացմունքով: Այդպիսի բարիտոններ-հազվագիւտ են և պ. Ամիրջանեան, անտարակոյս, կարող է ամեն մի բեմի զարդ լինել, ուստի և ցանկանում ենք, որ շնորհալի բարիտօնը մեր (Պետերբուրգի) Կայսերական բեմի խմբի մէջ մտնէր»»[50]:

Բ.Ամիրջանի 1897թ. մայիսի 28-ի թիֆլիսյան համերգի մասին Մարգարիտ Բաբայանը գրում է. «Չորեքշաբթի, մայիսի 28-ին առիթ ունեցանք լսելու մեր հայրենակից պ. Բեգլար Ամիրջանին, Մոսկվայի կայսերական օպերայի արտիստին: Պարոնի ձայնը հզօր, շատ ընդարձակ ծավալի բարիտօն է, ձայնի տեմբրը վերին աստիճանի համակրելի և արդէն բավական մշակուած: Շնորհալի երգիչը մեծ զգացմունքով է երգում, և երաժշտական հասկացողութեամբ...

Գուշակում ենք պ. Ամիրջանին շատ փայլուն ապագայ, որովհետև այժմ նա ունի բոլոր յատկութիւնները ընտիր և առաջնակարգ երգիչ լինելու, մանաւանդ թէ որ միշտ եռանդով շարունակի, թէ իւր ձայնը աւելի մշակելու ու զարգացնելու, թէ իւր երաժշտական ճաշակը աւելի ևս նրբացնելու ու զարգացնելու և շատ չյափշտակուի այն յաջողութեամբ, որ նրան անկասկած ամենուրեք կուղեկցի»[51]:

Ամիրջանը երգում էր ոչ միայն Պետերբուրգում, այլև Ռուսաստանի գրեթե բոլոր նշանավոր քաղաքներում, նրա ուժեղ ձայնը հնչել է նույնիսկ փոքրիկ ու անհայտ վայրերում:

Իր համերգային ծրագրերում Ամիրջանը միշտ ընդգրկել է հայկական երգեր և ռոմանսներ, հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ:

1902 թ. նոյեմբերի 15-ին Եկատերինոսլավից Ալ. Սպենդիարյանին հասցեագրած նամակում Ամիրջանը գրում է. «Ես արդեն կատարեցի Ձեր «Թաթարական երգ» ռոմանսը: Երաժիշտներից շատերին դուր եկավ»[52]: Իսկ 1904 թ. հունվարի 24-ին Թիֆլիսի Արտիստական ընկերության դահլիճում Հայոց դրամատիկական ընկերության հաստատման տարեդարձի առթիվ ընկերության կազմակերպած միջոցառման ընթացքում Բ.Ամիրջանը կատարել է «Կռունկը» (մշակումը՝ Կլենովսկու) և Ալ.Սպենդիարյանի «Այ վարդ» ռոմանսը[53]: 1904 թ. փետրվարի 8-ին Թիֆլիսի ժողովարանի դահլիճում տեղի ունեցած համերգին Բ.Ամիրջանը երգել է «հայերէն «Լռեց» և «Ոհ ինչ անուշ»: Հասարակութիւնը, որ

---

[50] Ներքին լուրեր, «Մշակ», Թիֆլիս, 25 մարտի, 1897, N 35, էջ 3:

[51] Օր. **Մ.Բ.,** Պ.Բէգլար Ամիրջանի նուագահանդէսը, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 234-1:

[52] **Спендиарова М.** Летопись жизни и творчества А.А. Спендиарова, Ереван, 1975, стр. 83.

[53] Տե՛ս Ծրագիր, ԳԱԹ, Երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆոնդ, 263-285:

լցրել էր Ժողովարանի դահլիճը, բուռն ծափահարութիւններով վարձատրեց համերգի մասնակցողներին և գոհ սրտով հեռացաւ»»[54]:

Գլխում անդրադարձ է արվել Բ.Ամիրջանի և հայ արտիստների ստեղծագործական համագործակցությանն ու համատեղ համերգներն:

Ուսումնասիրելով Բ.Ամիրջանի և հայ ականավոր ջութակահար Հովհաննես Նալբանդյանի արխիվները, երաժշտագիտական գրականությունն ու ժամանակի մամուլը, պարզեցինք, որ նրանց համատեղ համերգները տեղի են ունեցել ինչպես Պետերբուրգում, այնպես էլ Պերմում ու Թիֆլիսում[55]:

Վաղամեռիկ ջութակահար Դավիթ Դավթյանի հետ Բ.Ամիրջանը համատեղ համերգներ է տվել 1909թ. աշնանը Կարսում, Քութայիսում, Թիֆլիսում և Բաքվում:

Բ.Ամիրջանը համագործակցել է երգիչ Տիգրան Նալբանդյանի հետ: Գլխում անդրադարձ է արվել Թիֆլիսում տեղի ունեցած նրանց համատեղ համերգներից երկուսին:

1916-ին մշտական բնակություն հաստատելով Թիֆլիսում՝ Ամիրջանն ակտիվորեն մասնակցել է քաղաքի երաժշտական կյանքին: Թիֆլիսի Ժողովարանի դահլիճում Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերությունը 1916թ. փետրվարի 12-ին կազմակերպել է իր տարեկան համերգը, որի ընթացքում ելույթ է ունեցել նաև Բ.Ամիրջանը: Իր գործունեության թիֆլիսյան շրջանում երգիչն անմնացորդ նվիրվել է մատաղ սերնդի դաստիարակությանը: 1922-ից սկսած՝ Բ.Ամիրջանը տարբեր դահլիճներում կազմակերպում էր ամենամյա դասարանական համերգներ, որոնց ծրագրերի զգալի մասը կատարում էին Բ.Ամիրջանի սաները: Երգիչը հանդես էր գալիս ինչպես մենակատար, այնպես էլ զուգերգերով՝ երգելով պատանի երաժիշտների հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

✓ Օժտված լինելով լայն դիապազոնի բացառիկ գեղեցկության ձայնով, կատարյալ վոկալ տեխնիկայով, ինտոնացիայի մաքրությամբ և վերամարմնավորման հազվագյուտ ունակությամբ՝ Բ. Ամիրջանն ստեղծեց տասնյակ կենսականորեն ճշմարիտ կերպարներ:

✓ Ամիրջանի՝ դիապազոնով հսկայական և ուժեղ, բնույթով՝ դրամատիկ, ներքևի ռեգիստրում բասային երանգ կրող հարուստ և հզոր բարիտոնի թավշյա ու դուրեկան տեմբրը, որը լիահնչուն էր բոլոր ռեգիստներում, իդեալականորեն համապատասխանում էր Վերդիի օպերաների բարիտոնային դրա-

---

[54] Տե՛ս Ներքին լուրեր, «Մշակ», Թիֆլիս, 10 փետրվարի, 1904, N 23, էջ 1:

[55] Տե՛ս **Սալնազարյան Գ.,** Էջեր երգիչ Բեգլար Ամիրջանյանի և ջութակահար Հովհաննես Նալբանդյանի ստեղծագործական համագործակցության պատմությունից, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասնմեկերորդ նստաշրջան (Երևան-Արզական, 30 սեպտեմբերի – 2 հոկտեմբերի, 2016), նվիրվում է ՀՀ անկախության 25-ամյակին: Նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, էջ 125-132:

մատիկ դերերգերի (Ռիգոլետտո, Ժերմոն, Ամոնասրո, Կոմս դի Լունա, Դոն Կառլոս) մեկնաբանման համար:

✓ Նրա խաղացանկում կային դասական բարիտոնային գրեթե բոլոր դերերգերը, այդ թվում՝ Էսկամիլիո (Բիզե՝ «Կարմեն»), Իշխան Իգոր (Բորոդին՝ «Իշխան Իգոր»), Ռուսլան (Գլինկա՝ «Ռուսլան և Լյուդմիլա»), Վալենտին (Գունո՝ «Ֆաուստ»), Տոնիո, Սիլվիո (Լեոնկավալլո՝ «Պայացներ»), Ալֆիո (Մասկանի՝ «Գեղջկական պատիվ»), Գրյազնոյ (Ռիմսկի-Կորսակով՝ «Թագավորի հարսնացուն»), Իշխան (Սերով՝ «Ռոգնեդա») ևն:

✓ Բ.Ամիրջանը՝ Դևի կերպարի լավագույն մեկնաբաններից մեկը, կապող օղակ դարձավ մի կողմից՝ այդ կերպարի առաջին մարմնավորողների՝ Պավել Խոխլովի և Բոգոմիր Կորսովի, մյուս կողմից՝ հռչակավոր Շալյապինի միջև, ով հետագայում շարունակեց և է՛լ ավելի խորացրեց Դևի կերպարի մարդկայնացման գիծը: Բ.Ամիրջանի անմիջական ջանքերի շնորհիվ 1914 թվականին Մոսկվայում իրականացվեց Ա.Ռուբինշտեյնի «Դև» օպերայի հայերեն լեզվով ներկայացումը:

✓ Դասական (իտալական, ֆրանսիական և ռուսական) և ժամանակակից օպերային խաղացանկի բարիտոնային դերերգերի կողքին Ամիրջանը միևնույն հաջողությամբ կատարել է նաև բասային դերերգեր՝ Մեֆիստոֆել (Գունո՝ «Ֆաուստ»), Սուսանին (Գլինկա՝ «Իվան Սուսանին»), Ջրաղացպան (Դարգոմիժսկի՝ «Ջրահարս»), Նիլականտա (Դելիբ՝ «Լակմե»), Կոչուբեյ (Չայկովսկի՝ «Մազեպա»), հանդես եկել Ելեցկու ու Օնեգինի լիրիկական դերերգերի մեկնաբանությամբ, որոնք պահանջում են ձայնի նրբություն և նրբերանգություն:

✓ Նշանավոր երգիչը միաժամանակ խոհուն, շաբլոններ և էժանագին էֆեկտներ չընդունող արտիստ էր: Ամիրջանի համար երգեցողությունն ինքնանպատակ չէր: Նրան երբեք չեն գրավել ձայնի գեղեցկության ցուցադրումը և վիրտուոզ էֆեկտները: Ամիրջանի համար ձայնը դերերգի կերպարային հնարավորությունների բացահայտման միջոց էր: Նրա համար առաջնայինը կերպարի պրոբլեմն էր, իսկ ձայնը միայն ծառայում էր այդ կարևոր նպատակին:

✓ Օպերային երգչի ստեղծագործական գործունեության անբաժան մասն էին կամերային ելույթները: Ամիրջանի համար ռոմանսն ու երգը կերպարային արվեստի պակաս կարևոր աղբյուր չէին, քան օպերան: Համերգային էստրադայում նա պրոպագանդում էր իր սիրելի օպերային կոմպոզիտորների, ինչպես նաև Ռախմանինովի, Լիշինի, Կյուիի, Գրեչանինովի և այլոց կամերային ստեղծագործությունները:

✓ Հենց կամերային համերգների ժամանակ էլ Ամիրջանը հանդես էր գալիս հայկական երգացանկով: Նրա մեկնաբանությամբ հնչել են ինչպես հայ երաժշտության դասականների՝ Տ.Չուխաճյանի («Ոհ, ինչ անուշ»), Մ.Եկմալյանի («Լռեց...»), Կոմիտասի («Ծիրանի ծառ»), Ալ.Սպենդիարյանի («Այ վարդ», «Թաթարական երգ»), Ա.Մայիլյանի («Ծովի երգը») և այլոց երգերն ու ռոմանսները, այնպես էլ հայ գուսանական, աշուղական և ժողովրդական երգեր («Կռունկ»,

«Ձայն տուր, ով ծովակ», «Ողջույն տվեք իմ հայրենյացՊաղդասար Դպիր՝ «Ի ննջմանեդ արքայական», Սայաթ-Նովա՝ «Չիս ասում», Ջիվանի՝ «Պաղ աղբյուրի մոտ» ևն):

✓ Հայ երգարվեստի նմուշների պրոպագանդմանը զուգահեռ՝ Բ.Ամիրջանը համագործակցել է հայ երաժիշտ-կատարողների հետ՝ համատեղ համերգներով հանդես եկել հայ կատարողական արվեստի մյուս փայլուն ներկայացուցիչների, այդ թվում՝ երգչուհի Նադեժդա Պապայանի, ջութակահար Հովհաննես Նալբանդյանի, երգչուհի և դաշնակահարուհի Մարգարիտ Բաբայանի, ջութակահար Դավիթ Դավթյանի և այլոց հետ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **Սալնազարյան Գ.,** Էջեր երգիչ Բեգլար Ամիրջանյանի և ջութակահար Հովհաննես Նալբանդյանի ստեղծագործական համագործակցության պատմությունից, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասնմեկերորդ նստաշրջան (Երևան-Արզական, 30 սեպտեմբերի – 2 հոկտեմբերի, 2016), նվիրվում է ՀՀ անկախության 25-ամյակին: Նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, էջ 125-132:
2. **Салназарян Г.** Беглар Амирджанян и первая русская библиотека-читальня в Милане, Искусство и художественное образование в контексте межкультурного взаимодействия, Материалы VI Международной научно-практической конференции, 20 октября 2017г., Казань, Изд-во Казанского университета, 2017, стр. 224-233.
3. **Սալնազարյան Գ.,** Բեգլար Ամիրջանի թիֆլիսյան հյուրախաղերը, Հանդես. գիտական հոդվածների ժողովածու, 2017, 19, էջ 172-177:
4. **Սալնազարյան Գ.,** Բեգլար Ամիրջանի ուսումնառությունը Պետերբուրգի և Միլանի կոնսերվատորիաներում, Հայագիտական հանդես, 2017, 3 (37), էջ 188-196:
5. **Սալնազարյան Գ.,** Իշխանուհի Մարիամ Թումանյանի հուշերը Բեգլար Ամիրջանի մասին, ԿԱՆԹԵՂ. գիտական հոդվածներ, 1 (74), 2018, էջ 252-259:
6. **Սալնազարյան Գ.,** «Bel Canto»-ի հայ առաջին վարպետները. Բեգլար Ամիրջան, ԿԱՆԹԵՂ. գիտական հոդվածներ, 2 (75), 2018, էջ 260-268:
7. **Սալնազարյան Գ.,** Բեգլար Ամիրջանը՝ օպերային երգիչ, ԿԱՆԹԵՂ. գիտական հոդվածներ, 3 (76), 2018, էջ 244-251:
8. **Սալնազարյան Գ.,** Դևի դերերգը Բեգլար Ամիրջանի մեկնաբանությամբ, Հայագիտական Հանդես, 2021, 4 (53), էջ 140-149:
9. **Салназарян Г.** Опера А.Г. Рубинштейна “Демон” в творческой судьбе первого армянского баритона Беглара Амирджаняна, Национальная опера в контексте музыкально-исторического процесса, Сборник материалов Международной научно-практической конференции в рамках проекта “Лаборатория современной башкирской оперы”, Уфа, 2021, стр. 86-92.

САЛНАЗАРЯН ГОР АШОТОВИЧ
ИСПОЛНИТЕЛЬСКОЕ ИСКУССТВО БЕГЛАРА АМИРДЖАНА

Резюме

Диссертация посвящена всестороннему изучению жизни и творческой деятельности армянского певца, выпускника Миланской консерватории, солиста московского Большого (1895-1903) и Тифлисского императорского (1903-1904) театров, Санкт-петербургской оперы Народного дома (1904-1916), талантливого представителя итальянской вокальной школы, мастера bel canto, лирико-драматического баритона **Беглара Аствацатуровича Амирджана** (Амирджаняна, 1868-1935).

В диссертации впервые:

➢ Всесторонне изучена жизнь и творческая деятельность Б. Амирджана и выявлены роль и значение певца в армянском музыкальном искусстве.

➢ Представлен творческий портрет Амирджана – оперного артиста.

➢ Рассмотрена концертная деятельность Амирджана.

➢ Введен в научный оборот ряд хранящихся в фонде Б. Амирджана Музея литературы и искусства в Ереване архивных документов, в том числе: «Моя автобиография» певца, ценные воспоминания Мариам Туманян под заголовком «Памяти певца Беглара Амирджана», а также адресованные артисту зрителями послания и альбомы.

➢ Выявлен и введен в научный оборот тот факт, что первую русскую библиотеку-читальню в Милане основал Б. Амирджан.

➢ Выяснено, что 5 звукозаписей Амирджана были произведены не в Петербурге, а в Тифлисе, и обнаружен цифровой вариант одной из них: арии князя Игоря «Ни сна, ни отдыха» из оперы Ал. Бородина «Князь Игорь».

Материалом для исследования послужили архивные документы: «Моя автобиография» Амирджана, воспоминания Мариам Туманян «Памяти певца Беглара Амирджана», а также афиши и программы концертов с участием певца, имеющаяся в наличии музыковедческая литература о Б. Амирджане, отзывы в современной ему прессе.

Диссертация состоит из введения, трех глав (Глава первая – «Факты биографии», Глава вторая – «Беглар Амирджан – оперный певец», Глава третья – «Концертная деятельность Беглара Амирджана»), выводов и списка использованной литературы.

Результаты исследования показали следующее:

✓ Будучи одаренным исключительной красоты голосом с широким диапазоном, совершенной вокальной техникой, интонационной чистотой и редчайшей способностью перевоплощения, Б. Амирджан создал десятки жизненно убедительных образов.

✓ Завораживающий бархатный тембр богатого, мощного, огромного по диапазону драматического баритона Амирджана, полнозвучного во всех регистрах, с басовым оттенком в нижнем, идеально соответствовал баритональным драматическим вокальным партиям опер Верди (Риголетто, Жермон, Амонасро, Граф ди Луна, Дон Карлос).

✓ В его репертуаре были почти все классические баритональные партии, в том числе: Эскамильо (Бизе, «Кармен»), Князь Игорь (Бородин, «Князь Игорь»), Руслан (Глинка, «Руслан и Людмила»), Валентин (Гуно, «Фауст»), Тонио, Сильвио (Леонкавалло, «Паяцы»), Альфио (Масканьи, «Сельская честь»), Грязной (Римский-Корсаков, «Царская невеста»), Князь (Серов, «Рогнеда»), и др.

✓ Б. Амирджан, один из лучших интерпретаторов образа Демона, стал связующим звеном между первыми воплотителями этого образа – Павлом Хохловым и Богомиром Корсовым – с одной стороны, и с другой – знаменитым Шаляпиным, продолжившим и еще более углубившим линию очеловечивания образа Демона. Благодаря непосредственным усилиям Б. Амирджана в 1914 году в Москве осуществилась постановка оперы «Демон» А. Рубинштейна на армянском языке.

✓ Наряду с баритональными партиями классического (итальянского, французского и русского) и современного оперного репертуара Амирджан с таким же успехом исполнял и басовые партии: Мефистофель (Гуно, «Фауст»), Сусанин (Глинка, «Иван Сусанин»), Мельник (Даргомыжский, «Русалка»), Нилаканта (Делиб, «Лакме»), Кочубей (Чайковский, «Мазепа»), выступал с интерпретациями лирических партий Елецкого и Онегина, требующими тонкой голосовой нюансировки.

✓ Знаменитый певец был одновременно вдумчивым, не воспринимающим шаблоны и дешевые эффекты артистом. Для Амирджана пение не было самоцелью. Его никогда не привлекала демонстрация красоты и виртуозности голоса, к чему порой прибегали и весьма известные певцы. Для Амирджана первостепенным было раскрытие образа, создание на сцене правдивого героя, а голос только служил этой важнейшей цели.

✓ Камерные выступления были неделимой частью творческой деятельности оперного певца. Для Амирджана романс и песня были не менее важным, чем опера, материалом для работы над раскрытием образа. На концертной эстраде он пропагандировал камерные произведения своих любимых оперных композиторов, а также Рахманинова, Лишина, Кюи, Гречанинова и других.

✓ Именно на камерных концертах Амирджан обращался к армянскому песенному репертуару. В его интерпретации звучали песни и романсы как классиков армянской музыки – Т. Чухаджяна, М. Екмаляна, Комитаса, Ал. Спендиаряна, А. Маиляна и других, так и армянские гусанские, ашугские и народные песни.

✓ Параллельно с пропагандой образцов армянского песенного искусства, Б. Амирджан сотрудничал с армянскими музыкантами-исполнителями, выступал в совместных концертах с другими замечательными представителями армянского исполнительского искусства, в том числе с певицей Надеждой Папаян, скрипачом Иоаннесом Налбандяном, певицей и пианисткой Маргарит Бабаян, скрипачом Давитом Давтяном.

SALNAZARYAN GOR ASHOT
THE PERFORMING ART OF BEGLAR AMIRJAN
Summary

The dissertation presents a comprehensive study of the life and professional career of the singer of Armenian origin, a graduate of the Milan Conservatory, soloist of the Moscow Bolshoi (1895-1903) and Tiflis Imperial (1903-1904) Theaters, the opera at Saint-Petersburg People's House (1904-1916), a master of bel-canto, a talented representative of the Italian vocal school, the lyric-dramatic baritone **Beglar Amirjan** (Amirjanyan, 1868-1935).

In the dissertation, for the first time:

- B. Amirjan's life and professional career is studied, and the singer's role and significance in Armenian music art identified.
- The operatic artist B. Amirjan's professional profile is presented.
- B. Amirjan's concert activity is addressed.
- A number of archive documents are introduced to academic circles. These include the singer's "My Autobiography", Mariam Tumanyan's valuable memoirs "In Memory of the Singer Beglar Amirjan", as well as albums and messages, addressed to the artist by spectators. All of these materials are stored in the B. Amirjan Fund at the Museum of Literature and Art in Yerevan.
- The fact that the first Russian Library Reading Room in Milan was founded by B. Amirjan, is revealed and introduced to academic circles.
- It is discovered that Amirjan's 5 audio records had been executed in Tiflis, rather than in Saint-Petersburg, and the digital version of one of them – Prince Igor's aria "Neither Sleep, Nor Rest" from Al. Borodin's "Prince Igor" opera – is found.

The following archive documents: "My Autobiography" by Amirjan, recollections by Mariam Tumanyan entitled "In Memory of the Singer Beglar Amirjan", posters and programs of concerts with the singer's participation, musicological materials and reviews in the contemporary periodical press, related to B. Amirjan, served as material for this research.

The dissertation includes an introduction, three chapters (Chapter One – "Facts of Biography", Chapter Two – "Beglar Amirjan – the Opera Singer", Chapter Three – "The Concert Activity of Beglar Amirjan"), conclusions and reference list.

The research results showed as follows:

- ✓ Being gifted with a voice of exceptional beauty and wide range, perfect vocal technique, pure intonation and a unique talent for impersonation, B. Amirjan created dozens of true-to-life convincing characters.
- ✓ The fascinating velvety timbre of Amirjan's rich, powerful, dramatic baritone with a large vocal range, sounding full in every register, with a bass shade in the

lower, matched ideally to dramatic baritone roles in Verdi's operas (Rigoletto, Germont, Amonasro, Count di Luna, Don Carlos).

✓ His repertoire embraced almost all of the classical baritone parts, such as: Escamillo (Bizet, "Carmen"), Prince Igor (Borodin, "Prince Igor"), Ruslan (Glinka, "Ruslan and Lyudmila"), Valentin (Gounod, "Faust"), Tonoi, Silvio (Leoncavallo, "Il Pagliacci"), Alfio (Mascagni, "Cavalleria Rusticana"), Gryaznoy (Rimsky-Korsakov, "The Tsar's Bride"), Prince (Serov, "Rogneda"), etc.

✓ One of the best interpreters of Demon's character, B. Amirjan acted as a liaison between the first embodiers of the character – Pavel Khokhlov and Bogomir Korsov, on the one hand, and on the other – great Chaliapin, who kept up and went even further in attaching human features to the character at issue. Due to B. Amirjan's personal robust efforts, A. Rubenstein's "The Demon" was staged in Moscow in 1914 in the Armenian language.

✓ Along with the baritone parts of classical (Italian, French, Russian) and contemporary opera repertoire, Amirjan was just as successful in performing bass parts, such as: Mephistopheles (Gounod, "Faust"), Susanin (Glinka, "Ivan Susanin"), Miller (Dargomyzhsky, "The Mermaid"), Nilakanta (Delibes, "Lakme"), Kochubey (Tchaikovsky, "Mazepa"), as well as in interpretating Yeletsky's and Onegin's lyrical parts, which required refined vocal nuancing.

✓ The renowned singer was also a thoughtful actor. For Amirjan, singing had never been an end in itself. Commonplace and cheap effects had always been alien to him. He never aspired to showing the beauty and virtuousness of his voice, albeit some very famous singers resorted to that. Of prime importance for him was to personate the character, to create a truthful image on the stage, and the voice only served to achieve that objective.

✓ Chamber performances were an indivisible part of the opera singer's professional activity. For Amirjan, romance and song provided no less material for working on creation of a character, than opera did. On the concert stage, he popularized chamber pieces of his favorite opera composers, and those by Rachmaninov, Lishin, Cui, Grechaninov and others.

✓ At chamber concerts Amirjan addressed the Armenian song repertoire. He interpreted and performed songs and romances by the classics of Armenian music – T. Chukhajyan, M. Yekmalyan, Komitas, Al. Spendiaryan, A. Mailyan, and the Armenian gusan, ashugh and folk songs.

✓ In parallel with popularization of Armenian song art, B. Amirjan collaborated with Armenian musicians-performers, took part at joint concerts, which featured such brilliant representatives of Armenian performing art as the singer Nadezhda Papayan, violinist Hovhannes Nalbandyan, singer and pianist Margarit Babayan, violinist Davit Davtyan.